ՊԵՏՐՈՍ Հ. ԱԴԱՄԵԱՆ

(Մի համառօտ հայեացք նորա կեանքի եւ գործունէութեան վերայ)

Ա. Մ. ՎՐՈՑՐԻ

(Շարունակութիւն և վերջ [1])

Գ.

Ադամեանի հայեացքը դերասանական արուեստի մասին.—Նորա գլխաւոր դերերը.—Ի՞նչ արեց Ադամեան հայ բեմի համար.—Ադամեան իբր բանաստեղծ և նկարիչ.—Ի՞նչ էր սիրում Ադամեան.—Մեր մասնաւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս։

Ադամեանի հայեացքը դերասանական արուեստի մասին.—Ադամեան, դժբաղդաբար, ծնած էր մի ալնպիսի երկրում, ուր գեղարուեստը չունի ոչ մի քաջալերո և խրախուսող։ Բնութիւնը տալիս էր իւր տուրքը, արտաղրում էր, բայց չը կար մի հաստատութիւն կամ հիմնարկութիւն որ արտաղրածը պահպանէր և հոգ տանէր նորա զարգացմանը։

Սուլթան Ապդ-իւլ-Մէջիդի օրով, երբ չոգենաւերը լողալով աւելի մօտեցրին հեռու Արևելքը Եւրոպային, սկսան եւրոպական զանազան ազգերի հոսանքներ։ հեղեղել սուլթանների մայրաքաղաքը, որոնց լարաբերութիւնները աւելի սերտացան, երբ Խրիմի պատերազմի առթիւ եւրոպական բանակներ Կ. Պոլիս մտան լգնութիւն Սուլթանին։ Այդ միջոցներն էր որ Կ. Պոլսում եկան և սկսան իրանց ներկայացումները եւրոպական, մասնաւորապէս իտալական խմբեր։ Ահա սոքա էին որ առաջին անգամ իրանց խաղով ազդեցին Կ. Պոլսեցի մի խումբ հայ երիտասարդների վերայ և նոցա մէջ միտք լղացրին ազգային թատրոն հիմնելու, որին կնքել են

---

[1]) Տե՛ս «Մուրճ» № 9։

«Արեւելեան Թատրոն» անունով 50-ական թուականներին։ Մեր այս փոքրիկ լառաջաբանի նպատակն է, ցոյց տալ ընթերցողին թէ այնպիսի մի ինքնաբոյս հիմնարկութիւնից չէր կարելի շատ բան պահանջել։ Անդրանիկ հայ դերասան և դերասանուհիներ երևցան բեմում, որոնցից շատերը, ակամատեսների վկայութեամբ, իրանց բեմական տաղանդով զարմացրին նոյն իսկ եւրոպացիներին։ Իսկ թէ հասարակութեան առաջնորդը՝ մամուլը, ինչ հայեացք ունէր Թատրոնական արուեստի մասին՝ այդ արդէն լիշած ենք մեր դրուածքի նախարդ մասում, հետևաբար աւելորդ է կրկնելը։ Հետևաբար առիթ ունենք մտածելու թէ որքան տաղանդաւոր դերասաններ լառաջ են եկել դեռ առաջին քայլում՝ որ կարողացել են իրանց խաղով միանգամից հասարակութիւնը սերտ կապել Թատրոնի հետ։ Այդ միջոցներումն էր որ մի սիրունիկ տղայ, թողած ամեն ինչ, թափառում էր Թատերաբեմերի վերայ, դերասանների խմբերում և նոցա տներում։ Դա Աղամեանն էր. նա իւր բոլոր ուշադրութեամբ հետևում էր մեծ դերասանների խաղերին, թէ նոքա ինչպէս էին խօսում, բարկանում, տանջւում և մեռնում։ Նա էլ սկսաւ հետևել կենդանի օրինակներին, թէ առանձին և թէ խաղալով, դնելով իւր դերերում աւելի կորով, զգացմունք և միացնելով դրանց՝ ներդաշնակ ձայնը։ Սորանցով արդէն նա բաւական զանազանւում էր իւր ընկերակիցներից։ Այսպէս նա մարզւում էր դրամաներում, գլխաւորաբար սիրահարի դերեր կատարելով։ Ինչպէս այն ժամանակուայ բոլոր բեմերում, նոյնպէս և հայկականի վերայ, տիրապետում էր եղանակով խօսելը, որ մեր մէջ մտած էր մասնաւորապէս իտալացիներից. ամբողջ խումբը վարակուած էր այդ հիւանդութիւնով, ով աւելի լաւ եղանակէր, (մանաւանդ ազգային անուանուած պատմական պիէսներում), նա էր ամենալաջող դերասանը։ Աղամեան քիչ ունէր այս թերութիւնից՝ իբրև աւելի ուշ բեմ դուրս եկող դերասան։

Այցելելով Տփխիս և ապա Ռուսաստան, չփնտրելով ռուսական լաւ դերասանների հետ, նա մտիկ ծանօթացաւ բեմի ալժմեան ռէալական ուղղութեան. դորան պակաս չէին օգնում և Թատրոնական ընտիր քննադատութիւններ։ Բայց ինչպէս հին ուղղութիւնը անտանելի էր իւր եղանակով, պակաս անտանելի չէր և ռէալականութեան երկրպագուների ուղղութիւնը, որին զոհաբերում էին Թատրոնական արուեստի բոլոր դեղեցիկագոյն մասը։ Ահաւասիկ այս կէտի վերայ ամենայն իրաւամբ Աղամեանը զայրանում էր։ Շատ անգամ խաղի բնականութիւնը պահանջում է որ մի ամբողջ խօսակցութիւնը կամ մենախօսութիւնը կատարուի այնպէս՝ որ դերասանի կռնակը միայն տեսնէ հասարակութիւնը։ Դերասանի խաղից ինչ հաճոյք կարող է ստանալ հանդիսականը՝ երբ նորա դէմքի արտայայտութիւնը իրան անտեսանելի մնայ։ Այսպիսի դէպքերում բնականութիւնը միշտ պէտք է զոհուի գեղարուեստին, և ամենաթուն ռէալիստ դերասանն անդամ չը պէտք է վրդովուի այս զոհաբերութիւնից։ Այս մասին կարելի

էր դեռ շատ օրինակներ բերել, բայց կարծում ենք որ այսքանով մեր միտքը հասկացրինք։ Ադամեան, (ինչպէս նաև Ֆրանսիայ՝ յատնի կատակերգակ Կոքըլէն, և ուրիշներ) պաշտպանում էր այն միտքը թէ բնականութեան պատճառով երբէք պէտք չէ ստեղծագործ անել գեղարուեստական մասը։ Բնականութիւնը պէտք ներդաշնակ կերպով բեմի վերայ միանայ գեղարուեստական նրբութեան հետ, այլապէս թատրոնը չի հասնիլ իւր գլխաւոր նպատակին, այն է՝ ուղղել, մեղմացնել բարքերը՝ գեղարուեստօրէն ներկայացնելով ճիշտ տիպեր։ Տիպերը ճիշտ ներկայացնելիս, առանձին ուշադրութիւն դարձնելով գեղարուեստական մասին, երբէք բնականութեան դէմ գործած չենք լինիլ։ Ընդհակառակը, բնական տիպը եթէ ունի իւր մէջ թերութիւններ, շատ յաճախ կը պատսպարի գեղարուեստի վերարկուի տակ։ Մենք բոլորս կենդանի վկաներ ենք թէ Ադամեան որքան բնական էր խաղում իւր դերերը, միևնոյն ժամանակ մտցրած էր իւր դերերում և գեղարուեստը, էստէտիկան։ Շատ ճշտութեամբ նկատած էր „Одесс. Телеграф"-ի լրագրագիրը թէ «Ադամեան երբէք քառորդոմն ռէալիստ և մի քառորդոմն միայն կլասիկ է»։ Ամփոփենք արուեստի մասին Ադամեանի քարոզածը։

Ա. Առանձին խնամքով և բնականութեամբ պատրաստել դերերը, միևնոյն խնամքով միացնելով նորան գեղագիտական մասը։

Ճաշակի նրբանալու և զարգանալու պատճառով հասարակութեան մէջ աւելի և աւելի պահանջ է զգացուում գէպի կատարելագործեալ գեղարուեստը։ Խոհարարը որ միայն կերակուր եփելու պաշտոն ունի, որ շատ դրական գործ է, խոհարարը, ասում ենք, ոչ միայն ջանք է գործ դնում իւր կերակրի ներքին արժանաւորութեան, քմաց պատճառելիք հաճոյքին, այլ և աշխատում է կարելի եղած գեղարուեստական ձևը տալ նորա արտաքինին, ուզում է կշտացնել՝ միևնոյն ժամանակ հաճոյք պատճառելով մեր աչքերին։ Ուրեմն մի խոհարար, որի կոչումը լոկ փոր կշտացնել է, նա որ աշխատում է զոհացում տալ մեր գեղագիտական ճաշակին, որքան առաւել մեծ է դերասանի պաշտոնը, որի կատարելիք գործը լոկ գեղարուեստական է։

Բ. Հայ լեզուի առոգանութեան խնդիրը։ Սա ևս դերասանական արուեստի գեղագիտական մասի հետ իբր ուղղակի առնչութիւն ունեցող խնդիր, մեծ կարևորութիւն ունի, և հանգուցեալ արուեստագէտը յաճախ ցաւով էր լիշում այս մասին իւր ընկերների ունեցած անտարբերութիւնը. ոմանք անփոյթ էին, ոմանք անկար, ոմանք էլ թէ մէկն էին և թէ միւսը։

Հայ լեզուի բառերի կազմութիւնից և չեշտեր չ'ունենալուց շատ դժուար է նորան բեմի վերայ արտասանել՝ տալով նորան այն կատարելութիւնը՝ որ պահանջում է թէ ներկայացնելի գերը և թէ ճաշակը։ Արտասանութեան մէջ գլխաւոր տեղ է բռնում նաև բառերի դասաւորութիւնը։ Շատ անգամ, իրանց մէջ կոկորդային բաղմաթիւ ասուր պարունակող բառեր չարաչարելով միմեանց մատ, դերասանին եթէ անկարելի չեն դարձնում

գոնէ դժուարացնում են արտասանութիւնը և կրքերի արտայայտութիւնը։ Այդ պարագայում հեղինակը, կամ թարգմանիչը եթէ անփոյթ է եղել, դերասանը ինքը պիտի լրացնէ այդ պակասը՝ լանուն գեղարուեստի։ Այդպէս էլ անում էր Ադամեան։ Բացի դորանից, նա բառերը այնպիսի գեղեցիկ կերպով չեչտում էր, որ հայ լեզուն կրկնակի գեղեցկանում էր ոչ միայն հայերի, այլ նոյն իսկ օտարների լսելիքին։ Ադամեանի քննադատները այս տեսակէտից այնչափ լառաջ գնացին, որ մինչև անգամ ասեցին. «Այն լեզուն որով նա խաղում է, թէև հայերէն է, բայց ոչ երբէք կոկորդային, այլ բաւական քաղցրանչիւն, հեշտալուր և այլափոխուած լեզու է, կարծես անգլիական և իտալական լեզուների մի խառնուրդ լինի։ Մեզ ծանօթ հայերէնը՝ Ադամեանի բերնում այն է՝ ինչ որ է հրէական լեզուն գերմաներէնի մօտ. իսկ առոգանութիւնը աւելի ընտիր է։ Այնպէս որ մի մարդ եթէ իտալերէն և հայերէն չը գիտենայ, միևնոյն է թէ Օթելլօն լսէ հայերէն կամ իտալերէն. իսկ գերադասումը՝ ճաշակի խնդիր է»։ Ահա թէ ինչ է նշանակում գեղեցիկ և մշակուած առոգանութիւն։ Բացարձակ կարող ենք ասել, որ հայ լեզուի անտեղեակ ոչ մի քննադատը, որքան էլ լաւ դերասանի խաղ տեսնէր, չէր համարձակուիլ այսպէս խօսել հայ լեզուի մասին, եթէ չը լսէր այնքան գեղեցիկ և ազդու առոգանութիւն՝ որպիսին ունէր Ադամեան։ Բայց մենք հաւատացած ենք որ Ադամեան շատ չէր մտածում իւր արտասանելիքի մասին. նորա տաղանդը և զարգացած ճաշակը իսկոյն թելադրում էին նրան թէ ինչպէս պէտք է արտասանել։

Նոյն գեղագիտական տեսակէտից հետևում էր նա իւր բեմական հանդերձանքին և գլխաւորաբար գրիմին։ Ոչ մի դերասան դեռ չէ ունեցել նորա գեղարուեստական, ճիշդ, և այլափոխող գրիմը։

Իսկ եթէ նա առհասարակ հետևում էր էֆֆէկտի, ճիշդ է. բայց նորա գործադրած էֆֆէկտները ոչ թէ աչքի էին ընկնում իրրև անբնականութիւններ, այլ ընդհակառակը, խաղի բնականութեան սահմանից դուրս չը գալով, դեղեցկութիւն էլ էին պատճառում։ Վերջերս նրանում երբէք մի անտեղի էֆֆէկտ չէ երևացել։

* * *

Նորա գլխաւոր դերերը։—Ադամեանի գլխաւոր դերերի վերայ մենք մի ընդհանուր հայեացք միայն կը ձգենք. աւելի հետաքրքրողներին թողնելով որ կարդան նորա մասին գրուած բազմաթիւ քննադատութիւնները։

Խօսելով թէ Ադամեան ինչ աչքով էր նայում դերասանական արուեստի վերայ, մենք մասամբ ասած եղանք թէ ինչ ոգով պատրաստում էր իւր դերերը։ Դերերը պատրաստելիս անչափ օգնում էր նրան իւր արագակարգ վիշողութիւնը. բաւական էր որ նա մի անգամ կարդար կամ լսէր, արդէն ըմբռնած էր և մի վարժ լուշարարով պատրաստ խաղալու. իւր

դերը սովորելուց յետոյ մնացեալ ժամանակը նա նուիրում էր ուսումնասիրութեան։ Վերջերս պատրաստած իւր գեղեցիկ բէպերտուարի մասին ինչ նոր գրուածք որ լոյս էր տեսնում (գլխաւորաբար Շեքսպիրի մասին), նա իսկոյն ձեռք էր բերում կարդում և ապա իւր կարծիքը յայտնում։ Նա հաւասար յաջողութեամբ խաղում էր Համլէտ, Օթելլո, Կորրադո, Ֆին, Ուրիէլ Ակոստա և Արբենին։ 1887 թ. Ադամեան երբ պատրաստւում էր խաղալ «Լիր Արքան», լսողները տարակուսում էին, որովհետև այս դերը բոլորովին տարբերւում էր վերոյիշեալներից. բայց Ադամեանի հանճարը յաղթող էր, նա նոյնքան գեղեցիկ և կատարեալ Լիր էր որքան Կորրադո։

Ադամեանի դերերի պակը Համլէտն էր։ Ու ոչ մի դերասանի յաջողած էր այնքան ճշմարիտ և գեղարուեստական Համլէտ ներկայացնել՝ որպէս Ադամեան։ Թէպէտ մեղանում գովւում էր Ադամեան, բայց հայ մամուլը երբէք չ'ասաց նորա մասին այն՝ ինչ որ ասեցին Ռուսաստանի թերթերը։ Այսպէս, „Московскія Вѣдомости"-ի քննադատը խոստովանում է որ «ոչ Ռոսսի, և ոչ էլ հռչակաւոր Սալուինի հաւասարւում են Ադամեանին՝ Համլէտի դերում»։ Իսկ „Искуство" հանդէսը գրում էր. «Հայ դերասան պ. Ադամեան, առաջին անգամ բեմ դուրս գալով Համլէտի դերում, լիովին արդարացրեց այն գովասանական յայտարարութիւններն, որ հրատարակւում էին Մոսկուայի լրագիրներում... Առանց ընդօրինակելու, առանց նմանելու Համլէտի հռչակաւոր կատարողներին, նա ստեղծել է լիովին արուեստագիտական մի տիպ՝ ամենամանրամասն կերպով ուսումնասիրուած և կոկուած հրաշալի նրբութեամբ։ Ներկայացման այդ ինքնագիտ սեպհականութիւնը նրանումն է կայանում, որ Ադամեան Համլէտի խօսքերում և գործողութիւններում մտցրած է շատ աւելի կիրք և կորով, քան Ռոսսի և աշխարհահռչակ Սալուինի...»։

«Առաջին անգամն է որ ռուսաց բեմում մի այսպիսի բան ենք տեսնում. վատ չէր լինի, եթէ մեր «արքունի» դերասանները հետեւեին և բան սովորէին իրանց հայ արուեստակցից, որ ինչպէս կարծում ենք, թէև վկայական չունէ, բայց ունէ արուեստագիտութեան նուրբ ճաշակ և դերասանական բարձր տաղանդ...»։

Ադամեանի Համլէտի մասին երկար և քննադատական յօդուածներ նուիրած է „Новости" թերթում յայտնի ռուս գրագէտ Զուլկո, որոնց մէջ մեծ գովեստով է խօսւում Ադամեանի դերակատարութեան մասին։

Օղեսան, որ տեսած է բոլոր թատրոնական հսկաները, և թատերական զարգացած ճաշակի տեսակէտից մեծ համբաւ է վայելում, Ադամեանին գովաբանելու համար մայրաքաղաքի թերթերից մի քայլ էլ յառաջ դնաց։ „Одесск. Вѣстникъ" գրում է.

«Զարմացանց յափշտակւած ենք Ադամեանի նշանաւոր խաղով և գոհութիւն չենք նորա ձայնի դիւթական հնչիւններից։ Կատարեալ համար-

ձակութեամբ կարելի է ասել թէ Համլէտի դերում Աղամեանի լաւագոյն դիմութիւնը դերազանցեց ամեն ակնկալութիւն։ Ո՛չ Սալուինի, ո՛չ Բոսարտ, ո՛չ Պառնաչ, և վերջապէս ո՛չ մի աշխարհահռչակ դերասան տուել է մեզ այնպիսի անխարդախ և կատարելատիպ Համլէտ՝ որը տուեց մեզ պ. Աղամեան։

Օթէլլո՝ Աղամեանի վերջին տարիներում ուսումնասիրած դերերից մինն էր։ Երբ Տֆխիսում Օթէլլոի լաւտարարութիւնները կպցած էին, բարեմիտ մարդիկ նորից չչնջում էին հասարակութեան ականջին թէ՝ «Օթէլլո խաղալը նորա բանը չէ»։ Ներկայացումը լաջողութեամբ վերջացաւ. և ճշմարիտ տաղանդը ամեն քննութիւն լռեցրեց։ Ինչպէս Համլէտի, նոյնպէս և Օթէլլո-Աղամեանի մասին Տֆխիսի թերթերը այն չը գրեցին, ինչ որ գրեցին Ռուսաստանի մեծ քաղաքների աւելի զարգացած հասարակութեան մամուլը։ Սակայն հանճարն էր որ լաղթեց բնութեան թերութիւններին և ներկայացաւ մեր աչքին իբրև կատարեալ, անվեհեր, քաջ և որոտացող դիւցազն։ Զը նայելով իւր նուրբ և դաշն ձայնին, որ անհամապատասխան էր պատերազմող մաւրիտանացու ճշգրիտ տիպին, նա այնպիսի ալլափոխուած, հուժկու և առոյգ էր, որ մարդ դժւարանում էր հաւատալ թէ Օթէլլո ներկայացնողը նոյն Համլէտ—Աղամեանն էր։ Բայց Աղամեանը հրաշք էր գործում գլխաւորաբար Օթէլլոի այն տեսարաններում ուր խօսքից աւելի սիրտն է խօսում, և սրտի խօսածը արտայայտւում է դէմքի և մարմնոյ զանազան նուրբ, հոգեբանական շարժումներով. օր. դ. արարածը, երբ Նագօ սկսում է նախանձու թոյնը թափել քաջ մաւրիտանացու հոգում։

Զը նայելով իւր մի գլխաւոր, բնական, հասակի և կաղմուածքի թերութեան (Աղամեան կարճ-միջահասակ էր և ունէր շատ նուրբ կաղմուածք), այնու ամենայնիւ նա իւր մարմինը այնպէս լարդարում էր, որ հանդիսականի աչքին երեւում էր կատարեալապէս Շէքսպիրի նկարագրած հերոս-պատերազմողը։ Նա մեծ ճաշակով և խնամքով բարձրացնում էր իւր հասակը, և կայտառութիւն էր տալիս իւր կաղմուածքին։ Երեւում էր Օթէլլոն առոյգ, ցցած կրծքով, ջղոտ բազուկներով և ամուր սրունքներով։ Աղամեան իբրև Օթէլլո իւր արտաքինով ոչ մի թերութիւն չունէր։

Ահա թէ ինչ է գրում „Одесск. Вѣстникъ"-ի լօղուածագիրը Աղամեանի Օթէլլոի մասին։

«Պէտք է խոստովանուել թէ, նոյեմբերի 3-ին թատրոն գնալիս, բաւական վարանում էինք։ Մաւրի դերում օդեսացիք այնչափ բեմական կոլիֆէների են տեսած, որ տարակուսում էին թէ արդեօք Աղամեան պիտի կարողանայ անբիծ աղատուել այդ դլխաւոր խաղից։ Մի ժամանակ այդ դերը Օդեսայում կատարել է նշանաւոր Օլրիջը, և ես շատ լաւ պահպանած եմ լիշողութեանս մէջ մեր հասարակութեան այն ժամանակուայ ցնծութիւնը։ Յետոյ այդ դերը կատարեց Էրնէստօ Ռոսսի, և ապա Սալուինի

թատերական բեմի լայտնի թագաւորը։ Բայց Ադամեան իւր խաղով ոչ միայն չը զարթեցրեց այդ մեծ հեղինակութիւնների վիշատակը, այլ ցոյց տուեց թէ ինքն էլ նրանց համահաւասար մի հանճար է»։

Ողեսալում արդելւած էր թատրոններում դերասանին երեք անգամից աւելի բեմ կանչել, և փողոցներում ցոյցեր անել։ Նահանգապետի մասնաւոր թոյլտուութեամբ բացառապէս Ադամեանի համար այդ արդելքը վերացաւ։ Օթէլլոի ներկայացումից յետոյ Ադամեան տասնվեց անգամ ի տես կանչւեց։ Իսկ ամեն ներկայացումներից յետոյ ոգեորւած ժողովուրդը խանդավառ ցոյցերով առաջնորդում էր նրան դէպի իւր բնակարանը։

Արտաքոյ կարգի դրաւչութիւն ունէր Ադամեանի ստեղծած Ուրիէլ Ակոստան, որ իւր հոգեբանական խորին ուսումնասիրութեամբ բարձրացրած էր նրան իւր արժանաւոր աստիճանի վերայ։ Անկարելի էր տեսնել Ադամեանի Ուրիէլ Ակոստան և չը լափշտակւել։ Նա այդ դերումն էլ զերազանցեց իւր նախորդներին։ Այս մասին աւելորդ չէ մէջ բերել „Новороссійскій Телеграфъ“ թերթի քննադատութիւնից մի հատւած. «Առաջ, գրում է «Տելեգրաֆ»-ի լօգուածագիրը, Բաւնալին տեսել էի։ Նա տպաւորել էր լիշողութիւնս մէջ Ուրիէլի համակրելի պատկերը, որից յետոյ չէի ուզում նոյն դերում մի ուրիշ դերասանի տեսնել, որպէս զի այն քաղցր պատկերը չը ջնջւի մտքիցս. բայց չը գիտեմ, նեղանամ թէ ուրախանամ Ադամեանի վերայ, որ հոգոյս միջից հանելով այն պատկերը՝ նորա տեղում քանդակեց մի ուրիշ Ուրիէլ։ Տեսայ ոչ թէ այն Ուրիէլը, այլ հայ ճարտարագէտը բացեց իմ առաջս այդ կարող մարդու հոգոյն խորքը և լուսաւորեց նորա հոգոյն ամենագաղտնի խորշերը։

«Ադամեան մի հանճար է Ուրիէլ Ակոստայի դերում...։ Այո, Ադամեան ոչ միայն դերասան է, այլ՝ մի արտաքոյ կարգի տաղանդ, լաւագոյն ճարտարագէտ, և ժամանակակից թատրոնական հեղինակութիւնների մեկնիչ»։

Աննման էր մեծ արուեստագէտը Դիւմա որդու «Քին»-ի դերում։ Սկզբից մինչև վերջ հիանալի էին նո՝ա բոլոր կերպարանափոխութիւնները։ Մեծ ճաշակով կատարում էր նա Աննա Տէմբիի հետ լորդ Մէնլիի յանդիմանութեան և ներկայացման պատրաստութեան տեսարանները։ Մանաւանդ վերջինում, այլ ևս Քինը չէր ներկայացում բեմի վերայ, այլ նոյն իսկ Ադամեանը ինքն էր իւր կապրիզներով, վայրկենական բարկութիւնով և բոպէական հաշտութեամբ։ Բաւական մեծ նմանութիւն ունէ Դիւմայի նկարագրած Քինը Ադամեանի հետ։ Կարծես հեղինակը դրանով կամեցել է ներկայացնել նոյն իսկ Ադամեանին։

Դերաղանց էր Ադամեան «Կորրադո»-ի դերում։ Բացի այդ՝ նա սիրում էր խաղալ նոյն դերը։ Չէր կարելի Ադամեանի ներկայացրած Կորրադոից ուրիշ մի Կորրադոի աւելի կատարելագործեալ տիպար երևակայել։ Բացի սկզբից մինչև վերջ մշակւած հոգեբանական նուրբ խաղից, Ադամեան

մասնաւոր խնամքով պատրաստած կատարում էր վերջին թունաւորման տեսարանը։ Թէ որ աստիճան բնական էր խաղում նա այդ տեսարանը, արդէն դորան ապացոյց մէջ բերած ենք Կ. Պոլսում ներկայացնելիս բեմի վերայ պատահած մի անցք։ Նորա ցնցումների, կարկամութիւնների և ջղաձգութիւնների կատարեալ բնականութիւնը վկայում էին բոլոր բժիշկները, որոնք ստւար բազմութեամբ լսախում էին Աղամեանի այդչափ կատարելագործեալ ճշմարտանման կեղծումին ականատես լինելու։

Աղամեանի կատարած բոլոր նշանաւոր դերերի մասին մանրամասն խօսելը մեզ շատ հեռու կը տանէր։ Միայն մենք կը լիշատակենք որ նա մեծ յաջողութեամբ խաղում էր «Դիմակահանդէս»-ի Արբենինի դժուար և ապերախտ դերը։ Ռուս բոլոր նշանաւոր քննադատները վկայեցին թէ Աղամեան—Արբենին շատ գերազանց է Պիսարէւից, որ մինչև նորա երևալն համարւում էր միակ ընտիր Արբենինը։ Գերազանց էր «Աւազակներ» ողբերգութեան Ֆրանց Մոորի դերում, որի մասնաւորապէս ե. արարածը խաղում էր մեծ ճարտարութեամբ։ Կատարեալ խնամքով արտասանում էր նաև Ֆրանսուա Կոպպէի «Դարբիններին դործադուլ» դեղեցիկ բանաստեղծութիւնը։ Վերջերս ստեղծեց նաև «Զոհի տեղ դոհ» պիէսում Բոշարովի դերը՝ կատարեալ լաջողութեամբ։ Ինչպէս նաև «Гувернеръ»-ի դերը՝ որը նա խաղում էր ամենալն սիրով։

Բացի ողբերգականից, Աղամեան մեծ տաղանդ ունէր ընտիր և նուրբ կատակերգութեան, որ շատ առթիւ ցոյց տուած էր, բայց չէր դործածում, երկրորդական առարկայ համարելով։

Նա առհասարակ իւր բոլոր խաղացած դերերին մի տեսակ անբացատրելի ոգի և լուն էր փչում, որով կաչկանդում էր հանդիսականներին։ Այդ ոգին մենք չենք տեսել ոչ մի աշխարհահռչակ տաղանդի վերայ։ Վկայ մեր ասածին ռուսական մամուլը, որ իւր բոլոր տեսած հանբաւարներից բարձր դասեց Աղամեանին, չը նայելով որ նորա խաղացած լեղի, բացի անծանօթ լինելուց, շատերի համար դոլութիւնն անդամ տարակուսելի էր։ Ահա այնպիսի անլաջող հանդամանքներում երևցաւ Աղամեան ռուսական բեմի վերայ, և լաղթութեան դափնին արժանապէս ստացաւ՝ չնորհիւ իւր աստուածատուր հանճարին։

* * *

Ի՞նչ արեց Աղամեան հայ բեմի համար։—Աղամեան բոլորովին զուրկ էր վարչական ընդունակութիւններից. միևնոյն ժամանակ ոչ այնքան տրամադիր ուսուցանելու (թէև, անկեղծ լինելու համար, պէտք է ասենք որ նորան լսելու և նորա ասածներին հետևելու էլ տրամադիրներ չկային). պէտք է նորից կրկնենք որ նա լաճախ գանգատւում էր իւր ընկեր դերասանների արհեստի մասին ունեցած անտարբերութիւնից

փաստերը ցոյց տուեցին որ մինչ օրս ոչ մի դերասան դեռ չէ ըմբռնել, կամ անկարող է եղել ըմբռնել արուեստի մասին նորա քարոզածը և կամ հասկացածը չէ իրագործել։ Մենք սորանով չենք ստիպում, Ադամեանին հետևած լինելու համար, անպատճառ Համլէտ կամ Օթէլլո խաղալով ծաղրի առարկայ լինել։ Ադամեանի քարոզածը ասելով մենք մատնացոյց ենք անում այն ուղղութիւնը, որով նա պատրաստում էր իւր դերերը և բեմ դուրս գալիս՝ իւր ամեն մի բառին և ամեն մի շարժմանը ջանալով գեղարուեստի դրոշմը տալ։ Մեզ հանգուցեալ արուեստագէտը ինքն է պատմած որ համարեա ոչինչ նշանակութիւն չէր ունենալ իւր տաղանդը եթէ երկարատև անընդհատ մարզութիւններ չ'անէր թէ միմիկայի և թէ իւր մարմնի ճկնութեան զարգացման համար։ Շատ զուր էին բարի հոգիների բերնով տարածուած լուրերը թէ՝ «Ադամեան ծոյլ էր» Ադամեան ոչ միայն ծոյլ չէր, այլ դժուար թէ մի դերասան նորա չափով սիրէր իւր արուեստը և անխոնջ կերպով աշխատէր։

Նա ցոյց տուաւ թէ տաղանդը մշակելով մինչև որ աստիճան կատարելութեան կարելի է հասցնել, ցոյց տուաւ թէ ինչպէս պէտք է վերաբերուել դէպի արուեստը և զարգացրեց ժողովրդի գեղագիտական ճաշակը։

Նա լեղափոխեց մինչև իւր ժամանակ գոյութիւն ունեցող արուեստի աւանդական կարգերը, ցոյց տուաւ անբնական դրամաների և պատմական «Վարդան»-ների գեղարուեստի նկատմամբ ունեցած ձգտանները, նորանով հայկական թատրոնը հասաւ մի այնպիսի բարձրութեան, որ ապագայ օրերը դժուար պիտի տեսնեն։ Թէև պէտք է խոստովանել որ նա իւր բէպերտուարը ներկայացնելիս երբէք չէր մտածում իրան շրջապատող դերասանների կատարելութեան և լարմարութեան, նա միմիայն նրանց ցոյց էր տալիս գլխաւորապես այն կէտերը, որ ուղղակի առընչութիւն ունէին իւր խաղի հետ։ Իսկ խաղի ընդհանուր ամբողջութիւնը նա թողնում էր անուշադիր, այնպէս որ իրաւացի դժգոհութիւններ լսում էին թէ «Ադամեան իրան թղուկներով է շրջապատում»։ Նա չափազանց նախանձոտ էր։

*
* *

Ադամեան իբր բանաստեղծ և նկարիչ։—Ադամեանի գրած ոտանաւորներից 1880 թ. հրատարակեց մի հատոր, որ չ'արժանացաւ մի առանձին համակրութեան. այդ ոտանաւորները որքան էլ մի զգալուն սրտի և վառ երևակայութեան արդիւնք էին, այնուամենայնիւ գրական մեծ արժանաւորութիւն չունէին։ Աւելի ընտիր, լուրջ և կատարելագործեալ են իւր վերջին տարիներում գրածները՝ որոնք դժբախտաբար անտիպ մնացին. նոցա մէջ կայ աւելի բանաստեղծութիւն, ճաշակ և միտք. իսկ իբր նկարագրական—գեղարուեստական դրուածներ՝ հիանալի են։ Ադամեան ոչ նկարչի և ոչ էլ բանաստեղծի կոչումով աշխարհ էր

եկած. Նորա ճակատին «բեմական հանճար» գրած էր, բայց միևնոյն ժամանակ զարմանալի են Նորա այդ ճիւղերում ցոյց տուած ընդունակութիւնները։ Իբր բանաստեղծ Նորա գրածները կարելի է առանց տաղտկութեան մինչև անգամ սիրով կարդալ. նա մեծ խնամք էր տանում բառերի գեղեցիկ դասաւորութեան և լանգերի հարստութեան վերայ, որ մի բանաստեղծական գրածքի գեղարուեստական գլխաւոր արժանաւորութիւններն։ Բացի հրատարակուած աշխատութիւններից Նորա վերջին գրածքները աշխարհիկ հալ գրականութեան համար կարելի է մէկ մէկ գեղեցիկ մարգարիտներ համարել, և ցանկալի էր որ հոգ տարուէր ժամ չառաջ նոցա ի լոյս ածելուն։

Ադամեան իբր նկարիչ, որքան մեծ ճաշակ և սէր ունէր դէպի գեղարուեստի այդ ճիւղը, ալեուամենալնիւ կարելի է համարձակ ասել որ նա ոչ թէ ստեղծագործող՝ այլ օրինակող էր միայն։ Բայց նա մեծ չնորհք ունէր այդ մասում։ Զը նայելով որ նա գեղարուեստի այդ ճիւղը լոկ ինքնակրթութեամբ էր ձեռք բերել, բայց դէմքերը նկարում էր մեծ ճարտարութեամբ, նորագոյն կատարելագործած արհեստի պահանջների համաձայն։ Նա ապրուստի համար չաճախ ձեռք էր առնում իւր վրձինը։ Մեծ հասկացողութիւն ունէր գոյների բաղադրութեան (coloris) մասին։ Իսկ անթերի և կատարեալ էին իւր nature-morte նկարները, որոնց անչափ սիրում էր.

Թէոդոսիա եղած ժամանակ Ադամեան նկարեց հռչաւոր ծովանկարիչ Ց. Այվազովսկու պատկերը, որին ընդունելով մեծ վարպետը՝ գովեց Ադամեանի նկարչական ընդունակութիւնը։ Առհասարակ իբր ինքնուս նկարիչ Ադամեան գերազանց էր։

* * *

Ի՞նչ էր սիրում Ադամեան։—Տաղանդաւոր արուեստագէտը վերջերս հոգւով մարմնով անձնատուր էր եղած հոգեխօսութեան (spiritisme), որի մասին ամեն գրածք հաւաքում էր խնամքով և ուսում. նասիրում։ Այն մարդիկն էին իւր մերձաւորները՝ որոնք հետաքրքրում էին այդ գիտութեամբ՝ որին վերաբերում էր մեծ հաւատքով և երկիւղածութեամբ։ Իւր վառ երեակայութիւնը և հետախուզող բնաւորութիւնը առատ ճարակ էր գտել նրանում, բայց ոչ մի կերպով չէր լպենում։ Բնութիւնը իւր գաղտնիքները չատ թանձր վարագոյրով էր ծածկել։ Բայց Ադամեանի աչքերը չէին սիրում արգելքի պատահել։ Իւր չը տեսածի պակասը նա երևակայութեամբ էր լրացնում.

Քանի գիշերներ Ադամեան իւր համախոհներով լուսացրել է կանաչ սեղանի չուրջ մեծ ոգիների բերնից գոնէ մի դաղտնիք խլելու համար։ Հետզհետէ կանչում էր իւր հօր, մօր, Ներսէս Մեծի, Ներսէս պատրիարքի, Շէքսպիրի ոգիները, հարցնում էր, խօսում էր նոցա հետ, իւր և ուրիշների

ապագայի մասին։ Գոհացնում էին նորան ոգիները, նրանց հաճելի էր որ հողեղէն մարդը խառվէր իրանց անզրդերեղմանական հանգիստը։ Զենք կարող սորան մի որոշ պատասխան տալ։ Միայն լիշում եմ այն օրը, երբ չոգենաւ՝ նստած մեկնելու էինք դէպի Զմիւռնիա, Ադամեան իւր մի քանի լուղարկաւոր բարեկամների հետ առանձնացած հոդեխօսութեան մասին էր ճառում։ Նա ձեռքում բռնած թղթերու մի մեծ ծրար, ցոյց էր տալիս այն ապագայի գուշակութիւնները որ թելադրել էին ոգիները։ «Բացի Շէքսպիրից, ով կարող է ալսպիսի մտքեր լալտնել» գոչում էր Ադամեան լի հաւատքով։ Ապա պատմում էր թէ որքան արագ թելադրում էր ոգին, այնպէս որ ամենաարագ ձեռքը հազիւ հասնում էր այդ բոլորը ուրագրելու։

Զարմանալի չէր, երբ Ադամեան, կէս գիշերին վեր թռած իւր անկողնից, եթէ իւր սենեակում ննջած էր՝ մի բարեկամ նրան, և եթէ ոչ, մօտի սենեակի ննջողներին զարթեցնէր և ոգիների մասին մի բան հարցնէր կամ պատմէր։ Տեսնելով նորա այդ աստիճան ոգիների հետ զբաղմունքը, հարցնում էի ինքս ինձ՝ «Ադամեան այս աստիճան ենթարկուելով իւր վառ երևակալութեան ազդեցութեան, արդեօք չը պիտի ընկնէ իւր մտաւորական կարողութեան»։

Բացի նկարչութիւնից և գրականական զբաղմունքներից, Ադամեան չափազաց սիրում էր ձկնորսութիւնը և իւր որսած ձկների և առհասարակ Պետրոս առաքեալի արհեստին ունեցած լաջողութիւնը և ճարպիկութիւնը պարծենալով էր պատմում։ Նա որ իբրև դերասան երբէք ինքնագով և պարծենկոտ չէր, առանձին սնափառութիւն էր զգում դէպի ձկնորսութիւնը և սիրում էր երբ գովում էին այս մասում իւր լաջողակութիւնը։

Պէօլիկ-Դէրէի առաջ կարելի էր նորան տեսնել միշտ վաղ առաւօտեան կարթը ձեռքին, մի ընկեր էլ իւր դիմաց նաւակում նստած՝, ձուկ որսալիս։ Նա երեխալի նման հրճւում էր երբ ծովի բնակիչներից մէկը բռնւում էր իւր կարթից։

* * *

Մեր մասնաւոր կարծիքը նորա մասին ընդհանրապէս։—Ներկալացնելով ընթերցող հալ հասարակութեան թատրոնական մեծ վերանորոգչի բնաւորութեան, կեանքի և արուեստի մասին մեր գիտեցածը, կատարելապէս զգում ենք սորա համառօտութիւնը և թերութիւնները։ Քանի որ նորա մօտիկ ծանօթներից և բարեկամներից ոչ ոք չէր լանձն առնում մեծ արուեստագէտի նշանակութեան մասին մի քանի խօսք ասելու, մենք պարտք համարեցինք գոնէ այս համառօտութիւնը հաղորդել, ընդարձակագոյնը աւելի կարողներին թողնելով։

Մենք որքան զարմանքով և հիացմամբ նալել ենք նորա արտակարգ տաղանդի վերալ, որքան զմալելով հետևել ենք նորա կատարած դերերին և մեր զմալմանը միշտ հետևել է սքանչացումը, բալց լաճախ ևս առիթ ենք ու-

նեցել անչափ տխրելու նորա բնաւորութեան թերութիւնների վերայ, որ շատ անդամ պատճառ էին դառնում նորա բարոյական ենիթական վնասին. թէև ամեն թերութիւն ծածկւում էր իւր տաղանդի գեղեցիկ տակ, բայց մի ծայրը միշտ դուրսն էր մնում։ Իբրև մարդու մենք նորան ներկայացրինք մեր կարողացած սահմանի մէջ, կատարելապէս երաշխաւորելով մեր ասածների ճշմարտութեանը։

Այն շրջանում, այն հասարակութեան մէջ և հանգամանքներում, որտեղ մեծացել և զարդացել էր նա, որտեղ հասունացել էր Ադամեանի տաղանդը, եթէ աչքի առաջ ունենանք բոլոր այս պարագաները, (որոնց մասին բաւականի խօսած ենք բ. մասում), այն ժամանակ կրկին առիթ է ներկայանում մեր աչքին աւելի զարմանալու նորա բաղմակողմանի ընդունակութիւնների վերայ։ Երևակայէք մի մարդ որ մինչև անդամ զուրկ է եղել միջնակարգ կրթութիւնից՝ ինքնօգնութեամբ և աշխատութեամբ կարողացել է այն աստիճանի լառաջ գնալ, որ բացատրել է Շեքսպիրի խորախորհուրդ ստեղծագործութիւնները մայրաքաղաքների զարդացած հասարակութիւնների առաջ՝ մինչև այն ժամանակ անծանօթ նրբութեամբ, ճարտարութեամբ և լայնողակութեամբ. ամբողջ մի զարդացած հասարակութեան մամուլից միանգամայն հռչակւել է բեմական բարձր տաղանդներից բարձրագոյն և անզուգական. նա գրել է համարեա առանց սովորելու՝ իւր բնական ճաշակով, նա մտածել է առանց զարդացուցիչ դպրոցների՝ իւր բնական հանճարով. նա նկարել է առանց ուսուցչի՝ իւր բնական ճարտարութեամբ. նա խօսել է լեզուներ առանց վարժապետի՝ իւր բնական տաղանդով։ Թէև մեր մէջ շատ չը զարմանալը նորութիւնների կարգին է, բայց մենք չենք կարող զսպել մեր զարմանքը բնութեան այս տարօրինակ զաւակի վերայ։

Մենք չենք կարող երևակայել կամ բացատրել թէ ինչ պիտի լինէր Ադամեան, եթէ ունենար մի որոշ աստիճանի կրթութիւն։

Նա շատ ծրագիրներ իւր հետ գերեզման իջեցրուց, որոնց գլխաւորն էր Եւրոպայում իւր կատարելիք ճանապարհորդութիւնը՝ որ հայ հանճարի և հայ լեզուի լաղթանակը պիտի լինէր։ Նա մեզ դեռ շատ պէտք էր։

Նա մտադիր էր հայ թատրոնի վերակազմութեան նկատմամբ աշխատութիւններ պատրաստել, որ անշուշտ չէր թոլլատրում իւր բաղմազբաղ վիճակը, և որը ի հարկէ թողած էր աւելի իւր ալևոր օրերին։

Վերջացնելով մեր խօսքը նորա մասին, կ'ասենք որ Ադամեան, թատրոնի այդ ամենափայլուն աստղը, մեր աչքին շատերի երևացածից աւելի մեծ է թւել և համարելով նորան ժամանակիս ամենամեծ տաղանդաւոր դերասան, (սա մեր մասնաւոր կարծիքն է) աշխատել ենք մեր սոյն գրուածքում ցոյց տալ մեծ արուեստագէտի բաղմակողմանի բոլոր արժանաւորութիւնը։ Մենք որքան կատարելապէս ըմբռնել և հասկացել ենք նորան, աշխատել ենք մեր ըմբռնածը նոյնութեամբ հաղորդել հասարակութեան։

Մեր լաճախակի տեսակցութեան մէջ իւր շարունակ կրկնած խօսքերից մէկն էր՝ «եղբայր Վրուր, մեծ, շատ մեծ արուեստ է դերասանութիւնը». և ես առանց իւր ասածին բացատրութիւնը պահանջելու, մտածում էի ինքս ինձ. աշխատում էի չափել այդ անլատակ և կնճռոտ արուեստի բոլոր խորութիւնը, որ բարձր էր ուժերիցս, միմիայն ուզում էի գտնել մօտաւորապէս մի սահման որոշել այդ «մեծ, շատ մեծ արուեստ»-ին։ Ինչ էր պահանջւում կատարեալ դերասան լինելու համար.—բացի աստուածատուր տաղանդից և ընդունակութիւններից՝ առողջ և չափաւոր կազմուածք. ուժեղ, մաքուր և ճկուն ձայն, շարժուն, միմիկայի ընդունակ դէմք, վառ երևակայութիւն, զարգացած և թափանցող միտք, ընդհանուր և գրականութեան պատմութեան ուսումնասիրութիւն, գեղագիտական և նկարչական վերին աստիճանի զարգացած ճաշակ, և այլն և այլն։ Այս բոլորը ներկայանում էին աչքիս, և մեծ արուեստագէտի խօսքերը շարունակ հընչում ականջիս. «դերասանութիւնը մեծ, շատ մեծ արուեստ է» և այնքան դժուար՝ որքան դժուար է գտնել մի մարդ՝ օժտուած բարոյական և ֆիզիքական այնչափ արժանաւորութիւններով։ Եւ բնութիւնը չուապած էր Ադամեանին վերոյիշեալ բոլոր շնորհքները։

Նկարագրել ճշտօրէն Ադամեանին իբր մարդու և թէ իբր դերասանի, դա մի այնպիսի նիւթ է, որի մասին շատ երկար կարող է գրուել և դարձեալ թերի համարուել։ Մենք մեր կարողացածը արեցինք և պիտի աշխատենք մեծ արուեստագէտի կենսագրութեան լրացուցիչ մասերը հետզհետէ հրատարակութեան տալ։ Մեր ցանկութիւնն է որ այդ մեծ մարդու մեծ հոգին երևայ բոլորին իւր առաւելութիւններով ու թերութիւններով։

Թանգ է մեզ համար Ադամեանի ամեն մի տող ձեռագիրը և կարևոր նոցա հրատարակութիւնը, գլխաւորաբար նրանք՝ որոնք որ և է գրական արժէք ունին, և կամ պարզում են նորա ներքին կեանքի և հոգու մութ անկիւնները։ Իւր գրական աշխատութիւնները ամբողջապէս Կ. Պոլիս իւր ազգականների մօտ են, հետևաբար նոցա հրատարակութեան պէտք է որ նոքա հոգատար լինեն։ Իսկ Ադամեանին իբր մարդու և արուեստագէտի շատ մօտից կարելի է ճանաչել իւր առ պ. Աղէքսանդր Ստեփանեանց ուղղած հնգամեայ թղթակցութիւններից, որ պահւած են։ Պ. Ստեփանեանց որ բարեսիրաբար թոյլ տուեց մեզ այս գրուածքի համար օգտուել այդ նամակներից, լուսամբ չը պիտի մերժէ և, մեր սկսած գործը ամբողջացնելու համար, պիտի հաճի թոյլատրելու, որ այդ նամակները հրատարակենք, քանի որ նոցա մէջ երևում են Ադամեանի վիշտը, ուրախութիւնը, լուդմունքը, գանգատները և բարկութիւնը։ Ադամեան ոչ մի տեղ չէ երևում այնպէս՝ ինչպէս իւր նամակներում, մանաւանդ, եթէ ի նկատի ունենանք որ մեծ արուեստագէտի ամբողջ ներքին աշխարհը բաց էր իւր միակ սրտակից բարեկամի առաջ։